ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» Նոյեմբերի 2019թ.-ի N 31-Ն

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ կետի համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված սուբվենցիաները կրճատելու հետևանքով 2019թ.-ի համայնքի տարեկան բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.
   ա. 2019թ.-ի բյուջեի եկամտային մասի պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով սահմանված սուբվենցիաները տող 1261 պակասեցնել 978,1 հազար դրամով
   բ. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 1 դասի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածը պակասեցնել 420,1 հազար դրամով,
   գ. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի1 դասի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածը պակասեցնել 558,0 հազար դրամով:
   դ. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի հատկացումը ֆոնդային բյուջեին բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 09 բաժնի 02 խմբի 2 դասի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածը պակասեցնել 420,1 հազար դրամով այն ավելացնելով 01 բաժնի 01 խմբի 1 դասի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածին
2. Գեղարքունիք համայնքի մինի ֆուտբոլի դաշտի ցանկապատի կառուցման աշխատանքները ֆինանսավորելու համար 2019թ.-ի տարեկան բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.
   ա. 2019թ.-ի բյուջեի եկամտային մասի ֆիզիկական անձանց նվիրաբերությունից համայնքին դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքերը տող 1371 սահմանել 327,0 հազար դրամ
   բ. Կատարել հատկացում վարչական բյուջեի եկամտային մասից տող 1371. ֆոնդային բյուջեին 327,0 հազար դրամ այն ուղղելով բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 09 բաժնի 02 խմբի 2 դասի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածին

5 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

Ավագանու անդամներ Աստոյան Վանիկ Ն.

Հակոբյան Արմեն Վ.

Կարապետյան Զավեն Ա.

Միրիջյան Մարտին Ռ.

Ումրշատյան Մհեր Մ.

Գեղարքունիքի համայնքի ղեկավար Վ. Աստոյան

Կ.Տ.